

## Սահմանադրական դատարանը մերժեց ընտրություններու արդիւնքներու չեղեալ յայտարարելու դիմումները



**ԵՐԵՎԱՆ.-** Սահմանադրական դատարանը մերժեց խորհրդարանական ընտրություններու արդիւնքները վիճարկող եօթ քաղաքական ուժերու դիմումները եւ ուժի մէջ պահեց Կեդրոնական ընտրական յանձնաժողովին որոշումը:

Դատարան դիմած ուժերուն շարքին էին խորհրդարան անցած «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները, ինչպէս նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը, որ քանի մը տասնեակ ձայնի տարբերութեամբ էջը յաղթահարած 4 տոկոսի ընտրական շեմը:

Դիմում ներկայացուցած քաղաքական ուժերը նշած էին, որ ընտրական գործընթացին ընթացքին արձանագրուած են լուրջ խախտումներ՝ վարչական միջոցներու օգտագործումէն մինչեւ ընտրակաշառքի մասին տեղեկութիւններ: Անոնք դատարանէն պահանջած էին չեղեալ յայտարարել ընտրություններու արդիւնքները:

Սահմ. ... Ծար. կարդալ էջ 5

## Ընդդիմութիւնը պիտի ստանձնէ պատգամաւորական լիազօրագիրները

**ԵՐԵՎԱՆ.-** «Հայաստան» դաշինքը յուլիս 6-ին յայտարարեց, թէ Սահմանադրական դատարանի որոշումէն ետք պիտի ստանձնէ պատգամաւորական լիազօրագիրները՝ զանոնք նկատելով քաղաքական պայքարի լրացուցիչ գործիք եւ ոչ թէ պաշտօն:

Դաշինքը վերահաստատեց, որ Սահմանադրական դատարանի վճիռը չի սրբագրեր ընտրական խախտումները եւ չի լուծեր ձեւաւորուող իշխանութեան օրինականութեան հարցը: Յայտարարութեան մէջ շեշտուած է, որ դաշինքը կը վիճարկէ գործող իշխանութեան ներկայացուածութիւնը Ազգային ժողովին մէջ եւ կառավարութիւն կազմելու անոր իրաւունքը, այլ ոչ թէ ընդդիմութեան ստացած քուէները:

«Հայաստան» դաշինքը ընդգծեց, որ ընդդիմութեան ստացած աւելի քան 550 հազար քուէները պարտաւորեցնող են եւ պէտք է ծառայեն պայքարի շարունակութեան: Ըստ դաշինքին՝ պատգամաւորական լիազօրագիրներէն հրաժարելը պիտի նշանակէ կամաւորապէս հրաժարել այն իրաւական եւ քաղաքական գործիքակազմէն, որ կարելի է օգտագործել գործող իշխանութեան դէմ պայքարին մէջ: Դաշինքը յայտարարեց, որ խորհրդարանին մէջ իր գործունէութեան առանցքը պիտի ըլլայ ընդդիմադիր ուժերու համատեղ օրակարգը՝ Սահմանադրութեան պարտադրուած փոփոխութիւններու կանխում, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պաշտպանութիւն, քաղաքացիական իրաւունքներու եւ Պաշտօնի մէջ պահուող հայ ուղղափառներու իրաւունքներու պաշտպանութիւն, նաեւ գործող վարչախումբի հեռացում:

Յայտարարութեան համաձայն՝ խորհրդարանական ներկայութիւնը պիտի ծառայէ նաեւ քաղաքացիներու խնդիրները բարձրաձայնելու, հանրային դիմադրութիւն կազմակերպելու եւ միջազգային հարթակներու վրայ այլընտրանքային քաղաքական մօտեցումներ ներկայացնելու նպատակին:

«Հայաստան» դաշինքը Սահմանադրական դատարանի որոշումը որակեց նոր եւ աւելի համակարգուած փուլի սկիզբ՝ ընդգծելով, որ պայքարը պիտի շարունակուի: Իր կարգին, յուլիս 5-ին, ընդդիմադիր «Ուժեղ Հայաստան» դաշինքը եւս յայտարարեց, թէ պիտի ստանձնէ պատգամաւորական լիազօրագիրները:

## Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի 2025-2026 տարեշրջանի ամառային հանդէսներ



**ԹՈՐՈՆԹՕ.-** ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին համար յունիս 2026-ը տօնական ամիս էր, որուն ընթացքին տեղի ունեցան Պապայեան մանկապարտէզի, Գոլոյեան նախակրթարանի եւ Լափոյեան երկրորդական վարժարանի ամառային հանդէսներն ու վկայականներու բաշխումը:

Կարդալ էջ 3

## «Հորիզոն» Մետիան հինգերորդ տարին ըլլալով կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր



**ՄՈՆԹՐԷԱԼ.-** «Հորիզոն» ի խմբագրութեան ուղղուած 10 ապրիլ 2026 թուականին նամակով մը, Գանատայի Ինքնութեան եւ Մշակոյթի նախարար Մարգ Միլլըր կը յայտնէր, թէ նախարարութիւնը գնահատելով «Հորիզոն» Մետիայի համագանատական բնոյթի տեղեկատուական եւ լրագրական տասնամեակներու աւանդը, վերստին կը հովանաւորէ ամառնային ուսանողական վարժողական ծրագիրը (Internship program):

Վերոնշեալ նախաձեռնութիւնը ներառուած է Արդիւնաբերութեան նախարարուհի Մելանի ժոլիի Ահունցիք-Գարթիէրվիլ ընտրատարածքի «Գանատայի ամառնային աշխատանքներ» ենթածրագրին մէջ:

2026 թուականի ուսանողական վարժողական ծրագրին համար դիմում կատարած մոնթրէալահայ թեկնածուներէն Սեւակ Վ. Ղազարեան եւ Սահակ Մուտարիկեան ընտրուեցան ծրագրի գործակատարներ:

Սեւակ Վ. Ղազարեան նախակրթարանի եւ երկրորդականի իր ուսումը ստացած է Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգ. Վարժարանէն, յաճախած է Bois-de-Boulogne քուէճը, իսկ ներկայիս կը հետեւի «McGill» համալսարանի ուսողութիւն եւ բնագիտութիւն ուսման: ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան տեղական

Վարժ. ... Ծար. կարդալ էջ 5

## BEFORE YOU REPLACE THEM REJUVENATE THEM.

Don't buy new when your hearing aids can sound new again.

-  **REVIVE**  
Deep Clean & Restore
-  **RENEW**  
Calibrate & Optimize
-  **REJUVENATE**  
Hear Like New



hearing instrument specialists



[hearingaidsource.ca](http://hearingaidsource.ca)

[hello@hearingaidsource.ca](mailto:hello@hearingaidsource.ca)

NEVER WORN HEARING AIDS BEFORE? NOT SURE WHERE TO START?  
If your hearing isn't as clear as it used to be, or you're exploring hearing aids for the first time, we offer free hearing tests to assess your hearing. Our team provides clear, professional guidance so you feel confident and supported from your first appointment.



# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN  
NOW OPEN



Սեփականատեր  
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

## IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղին աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



# Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի 2025-2026 տարեշրջանի ամապերջի հանդէսներ



**ԹՈՐՈՆԹՕ.-** ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին համար յունիս 2026-ը տօնական ամիս էր, որուն ընթացքին տեղի ունեցան Պապայեան մանկապարտէզի, Գոլդեան նախակրթարանի եւ Լափոյեան երկրորդական վարժարանի ամապերջի հանդէսներն ու վկայականներու բաշխումը, ներկայութեամբ՝ ծնողներուն, ուսուցչակազմին, պաշտօնէութեան, համայնքի ներկայացուցիչներուն եւ հանրութեան:

Ուրբաթ, 5 Յունիսին, երեկոյեան ժամը 5:30-էն սկսեալ եռուգեռ էր Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնի մուտքին: 51 մանուկներ, իրենց ծնողներուն ընկերակցութեամբ, ժամանեցին կեդրոն՝ ուրախ եւ խանդավառ մթնոլորտ մը ստեղծելով:

Զեռնարկը սկսաւ «Համազգային» թատերասրահին մէջ, նկարներու ցուցադրութեամբ, որ կը ներկայացնէր Ծիլ կարգէն մինչեւ Ծաղիկ կարգի մեր աշակերտներուն գործունէութիւնները: Ապա հնչեցին Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները, որմէ ետք վարժարանի տնօրէն Բաֆֆի Սարգսեան ողջունեց ներկաները եւ պաշտօնապէս բացուած յայտարարեց հանդէսը: 51 շրջանաւարտները հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով երգեցին եւ ասմունքեցին եւ հանդէսի առաջին բաժինը փակեցին հայկական պարով, որ մեծ խանդավառութիւն պատճառեց ներկաներուն:

Անկէ ետք տնօրէն Բաֆֆի Սարգսեանի, փոխ-տնօրէնուհի Զէլա Գաբունեանի եւ Ծաղիկ կարգի ուսուցիչներու ձեռամբ կատարուեցաւ վկայականներու բաշխումը:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Հոգշ. Տէր Գարեգին Մ. Վրդ. Շիրազումեանի սրտի խօսքով ու «Պահպանիչ»-ով վերջ գտաւ հոգեթով հանդիսութիւնը:

Յաջորդող Ուրբաթ օր, 12 Յունիսին, Գոլդեան նախակրթարանի ընթացքը աւարտող 46 աշակերտներու «Համազգային» թատերասրահ հանդիսաւոր մուտքով եւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներու յոտնկայս ունկնդրութեամբ տեղի ունեցաւ վարժարանի 8-րդ կարգի հանդէսն ու վկայականներու բաշխումը: Զեռնարկը կը հանդիսավարէր վարժարանի հայերէն լեզուի եւ գրականութեան վաստակաշատ ուսուցչուհի Սիլվիա Մելիտոնեան:

Շրջանաւարտները հանդէս եկան ասմունքով: Երախտիքի խօսքեր արտասանեցին հայերէնով՝ Ծովինար Սարգսեան, անգլերէնով՝ Սեպուհ Սարգսեան եւ ֆրանսերէնով՝ Արեւ Խաչատուրեան:

Տնօրէնութեան խօսքը փոխանցեց տնօրէն Բաֆֆի Սարգսեան, որ յայտնեց, թէ վարժարանս իր յաջողութիւնները կը պարտի անմահ, ժրաշունչ եւ նուիրուած անձնակազմին: Սարգսեան լուսարձակի տակ առաւ համայնքի հեռատես եւ նուիրեալ ղեկավարներու տեսիլքն ու աշխատանքը, որով հիմը դրին այս վարժարանին:

Ապա, 8-րդ կարգի ուսուցիչներուն, տնօրէնին եւ կրթական խորհուրդի ատենապետին ձեռամբ տեղի ունեցաւ մրցանակ-վկայականներու բաշխումը:

Հոգշ. Տէր Գարեգին Մ. Վրդ. Շիրազումեան արտասանեց իր սրտի խօսքն ու «Պահպանիչ»-ը: Շրջանաւարտներու հանդիսաւոր ելքով փակուեցաւ հանդիսութիւնը:

Եւ վերջապէս, Ուրբաթ, 19 Յունիսին, երեկոյեան ժամը 7:00-ին, մանկապարտէզի եւ նախակրթարանի վկայականներով արդէն գինուած, եւ երկրորդական վարժարանի ընթացքը աւարտած 29 երիտասարդներ, շաբաթ մը ամբողջ հետեւելով երկրորդական կարգերու հայ գրականութեան եւ հայ դատի ուսուցչուհի Աշխէն Մալխասեանի ցուցմունքներուն, հանդիսաւոր մուտքով շարունեցան Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնի «Համազգային» թատերասրահի բեմին վրայ:

Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներէն ետք, Մալխասեան ողջունեց ներկաները եւ հաստատեց ներկայութիւնը եկեղեցիներու եւ կրօնական հայրերու, Հայ կեդրոնի յարակից միութիւններու, ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի ներկայացուցիչներուն եւ բարերարներուն: Մալխասեան յայտնեց, որ այս 29 երիտասարդները «մեր աչքերուն առջեւ կազմաւորուեցան եւ դաստիարակուեցան իբրեւ տիպար քաղաքացիներ ու հայրենասէր հայեր եւ այսօր հաստատ քայլերով պիտի շարունակեն իրենց երթը դէպի նորանոր բարձունքներ»:

Շրջանաւարտները հանդէս եկան բանաստեղծութիւններով: Հրաժեշտի ուղերձներ արտասանեցին հայերէնով՝ Անի Հրեշտակեան, անգլերէնով՝ Միլա Սերայտարեան եւ ֆրանսերէնով՝ Լարա Տէր Մինասեան:

Բեմ հրաւիրուեցաւ տնօրէն Բաֆֆի Սարգսեան: Ան նշեց, որ այսօրուան ստանալիք վկայականներով շրջանաւարտները կը միանան ծանր պատասխանատուութիւններ կրող այն փաղանգին, որ իր յաճախած միջավայրերուն մէջ կը դառնայ հայ ազգի ու դատի առաքեալը եւ իր յաջողութիւնները միշտ կը ծառայեցնէ ազգի վերելքին, շեշտելով որ այդ հոգիով է, որ թորոնթոյի Համայնքը կրցած է գոյատեւել: Սարգսեան վերջիցեց, որ անցեալ աւարտական հանդէսներուն վարժարանը ստեղծեց աւանդութիւն մը՝ յաջողական հունձքերը անուանելու հայրենիքի տարածքներու կամ ազգային հերոսներու անուններով, ամբապնդելու մեր շրջանաւարտներու պահանջատէր ոգին:

«Սոստացած էի այս դասարանին, որ նախքան իրենց աւարտելը, միասին պիտի այցելէք 211 Consumers Road-ի մեր նոր շէնքը եւ պիտի ըլլան առաջինները, որոնք պիտի տեսնեն շէնքը եւ այնտեղ ունենան կարճ դասապահ մը միասին: Այցելութեան առիթը ունեցանք երէկ, ուր մեր դասապահին նիւթը նուիրումի մասին էր, թէ ինչպէս թորոնթոյի սերունդներ եղան հեռատես եւ անոնց ծրագիրները միշտ ի շահ եղան մեր գաղութի ապագային. հերթը ահաւասիկ այսօր մերն է, որ նուիրուինք ապագայ սերունդներուն դաստիարակման: Այո՛, այս բեմին նստած 29 աշակերտները պիտի չվայելեն այս շէնքը որպէս աշակերտ այսօր, բայց փառք պիտի տան, երբ իրենց զաւակներուն համար տեղ կ'ունենանք այս վարժարանէն ներս տասնեակ տարի յետոյ», ըսաւ Սարգսեան եւ աւելցուց. «Գարեգին Նժդեհն այս առաքելութիւնը լաւագոյնս պատկերացուցած էր հետեւեալ խօսքերով. «Գերագանցի՛ր նախորդներիդ: Կռուիր այնպէս, որ քո ընթացքով հեշտացնես քեզից յետոյ միեւնոյն նպատակի համար կռուողների գործը, քանզի ով չի գերազանցում իր նախորդներին, նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով ոգու զարգացման օրէնքի դէմ», եւ մենք վկայելով ձեր տարիներու ընթացքին ցուցաբերած ազգանպաստ գործերն ու ձեր բուռն հայրենասիրութիւնը, տպաւորուելով ձեր նուիրուածութեանն եւ կամաւոր ոգիէն եւ քաջ գիտնալով որ ձեր մէջ կ'ապրի եւ կը շարունակէ ծաղիկի հայու հզօր հոգին, ձեր հունձքը, կ'անուանենք «Գարեգին Նժդեհ» հունձք»:

12-րդ կարգի ուսուցիչներուն, տնօրէնին եւ կրթական խորհուրդի ատենապետին ձեռամբ տեղի ունեցաւ մրցանակ-վկայականներու բաշխումը:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Արժ. Տէր Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեանի սրտի խօսքէն եւ օրհանգքէն ետք հնչեց «վերջին զանգ»-ը, «Գարեգին Նժդեհ» հունձքի շրջանաւարտները նետեցին իրենց գլխարկները, վերջին անգամ ըլլալով նկարուեցան ուսուցիչներուն հետ ու սրահէն դուրս ելլելով հրաժեշտ տուին վարժարանին՝ ուղուելու դէպի լուսաշող ապագայ:

ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարան  
Լուսանկարները՝ Յարութ Յակոբեանի

## Արցախի Ազգային ժողովի նախագահը հրաժարական ներկայացուց

**ԵՐԵՒԱՆ.** Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դանիէլեան, որ նաեւ կը կատարէ նախագահի պարտականութիւնները, յայտարարեց, որ կը հրաժարի իր պաշտօնէն: Ան նշեց, որ որոշումը կայացուցած է երկար մտորումներէ, քննարկումներէ եւ վերջին օրերուն տեղի ունեցած խորհրդակցութիւններէ ետք:

Իր յայտարարութեան մէջ Դանիէլեան ընդգծեց, որ 2025 թուականի մայիս 21-ին պաշտօնը ստանձնած էր ոչ թէ անձնական շահերէ, քաղաքական փառասիրութիւնէ կամ պաշտօն ունենալու ցանկութենէ մղուած, այլ Արցախի պետական հիմնարկներու շարունակականութիւնը չընդհատելու եւ Արցախի ժողովուրդի իրաւունքներն ու քաղաքական ձայնը պաշտպանելու նպատակով:

Ան յիշեցուց, որ բուն տեղահանութեանն էտք կրնար ընտրել աւելի դիւրին ճանապարհ՝ կեդրոնանալով ընտանիքին, նոր կեանքի եւ աշխատանքի վրայ: Սակայն, իր խօսքով, ընտրած է «ոչ թէ հեշտը, այլ պարտաւորը»՝ շարունակելու Արցախի պետականութեան գաղափարի պաշտպանութիւնը Հայաստանի մէջ ստեղծուած նոր իրականութեան պայմաններուն մէջ:

Դանիէլեան նաեւ անդրադարձաւ իր անձին շուրջ վերջին շրջանին շրջանառուող խօսակցութիւններուն, անհիմն մեղադրանքներուն եւ զրպարտութիւններուն՝ նշելով, որ չի ցանկար, որ իր դէմ ուղղուած արշաւը որեւէ ձեւով ստուեր նետէ Արցախի

Արցախ ... Ծար. կարդալ էջ 8

**ՀՅԴ երիտասարդական միութիւնները կը պահանջեն Պաքոյի մէջ պահուող հայ գերիներու անյապաղ ազատ արձակումը**

ՀՅԴ երիտասարդական միութիւններու Արեւմտեան ԱՄՆ-ի, Արեւելեան ԱՄՆ-ի եւ Գանատայի շրջանները միացեալ յայտարարութեամբ վերահաստատեցին Պաքոյի մէջ ապօրինաբար պահուող հայ գերիներու եւ պատանդներու անյապաղ ազատ արձակման պահանջը՝ նշելով, որ 29 յունիս 2026-ը շատերուն համար կը նշէ գերութեան 1000-րդ օրը, իսկ ուրիշներ արդէն աւելի քան 2000 օր է, որ կը մնան բանտարկուած:

Յայտարարութեան մէջ ընդգծուած է, որ Ատրպէյճանի կողմէ կազմակերպուած դատաւարութիւնները արդարադատութեան գործընթացներ չեն, այլ քաղաքական հետապնդման միջոցներ՝ ուղղուած Արցախի ղեկավարութիւնը վարկաբեկելու եւ Արցախի ցեղային գտման հետեւանքները օրինականացնելու:

Երբ շրջանները նաեւ խստօրէն քննադատեցին Հայաստանի ներկայ իշխանութիւններուն անգործութիւնը եւ կոչ ուղղեցին հայութեան ու միջազգային հանրութեան՝ շարունակելու պայքարը բոլոր հայ գերիներու ազատութեան եւ անոնց դէմ յարուցուած շինծու մեղադրանքներու չեղարկման համար:

# «ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՒ «ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»

## (Բաղդատական, Եւ Սերմնահատիկներ...)

Զօն՝ Նորվան Արք. Զարարեանին

Փարիզ կը գտնուէի 10-14 Ապրիլ 2026-ին, մասնակցելու համար «Միլիոնի Զորաշարժի Խորհրդաժողով»ին, որ գումարուեցաւ 11 եւ 12 Ապրիլին: Հանդիպումներու մէջ, յիշատակելի եղան Տիգրան Եկաւեանի հետ քանի մը գրոյցներս, որոնք ետքը շարունակուեցան առձեռն հեռագրային միջոցով, թէ՛ խօսակցութեամբ եւ թէ՛ երկգրառամբ: Խորհրդաժողովին առիթով իմ խօսքիս մէջ յիշած էի Գարեգին Վրդ. Յովսէփեանցի (ապա՝ Կաթողիկոս Կիլիկիոյ) «Հոգեւոր Հայրենիք» իմացքը: Պրն. Եկաւեան շատ հետաքրքրուած էր անով, մանաւանդ որ իրեն ծանօթ էր Վահան Տէրեանի «Հոգեւոր Հայաստան» իմացքը: Ակնարկած էի երկուքին տարբերութեան: Եւ ինք փափաք յայտնած էր, որ իր առցանց հաղորդաշարին՝ անոնց տարբերութեան մասին խօսիմ...: Մինչեւ խօսիլս՝ ձեռնարկեցի եւ աւարտեցի այս յօդուածը:

Ա. Գարեգին Վրդ. Յովսէփեանց էջմիածնի «Արարատ» պաշտօնաթերթի 1907-ի Սեպտեմբերի թիւին մէջ յօդուած մը գրած էր, գայն վերնագրելով «Մեր Հոգեւոր Հայրենիքը»: Զայն նախ կարդացած էի իր «Դէպի Լոյս եւ Կեանք» գիրքին մէջ, որ Կիլիկիոյ դարեմականքին մէջ սարկաւազական օրերուս նուէր ստացած էի Երջանկա-յիշատակ Գարեգին Կթղ. Սարգիսեանէ:

Յովսէփեանց Վարդապետ իր յօդուածը այսպէս սկսած է. «Զարգացման ենթակայ ամէն արարած իւր հայրենիքն ունի»: Մեկնակէտին՝ «հայրենիք» բառը իր պարզագոյն իմաստով առած է, այսինքն՝ իբր տեղ ու կլիմայ: Արդարեւ, «հայրենիք» բառը իր ստուգաբանական նշանակութեան մէջ, միայն տեղն ու կլիման չեն: Վարդապետին բացատրութիւնն է, թէ «հայրենիք»-ի գաղափարը նոյնիսկ գտանելի է «կիսակիրթ» որեւէ ժողովուրդի մօտ, թէեւ «սահմանափակ է եւ թանձրացեալ» իմաստներով, այսինքն, ըստ իրեն՝ իբր ընտանեկան օձախ, հայրենի գիւղ, հող ու ջուր, նախնեաց գերեզմաններ ու սրբութիւններ:

Քաղաքակրթութիւններու ծագումով եւ զարգացմամբ՝ հայրենիքի գաղափարը ընդարձակուած է: Թէ ի՞նչ է այն ընդարձակման բովանդակութիւնը՝ խօսք չէ ըսած: Անկասկած, նոյնիսկ ակնարկութիւն մը՝ իր նիւթէն դուրս համարած է:

Քաղաքակրթութիւնը հասկցած է իբր «աւելի ընդարձակ գաղափար» քան կրօնական «քաղաքակրթութիւն»ը, եւ իբր՝ նիւթական յառաջդիմութիւն ու «բարիք»: Ուրեմն, քաղաքակրթական հայրենիքը՝ նիւթական հայրենիքն է, որուն համար «կայ մի ուրիշ, հոգեւոր, վերացական հայրենիք» (մէջբերումին «վերացական»ը, աւելորդ է ըսել՝ թէ դրական առումով գործածած է. իբր ձգտում՝ «բարոյական եւ յաւիտեանական գաղափարներ», կամ՝ իբր ձգտում գիտութեան, ազնիւին, վսեմին եւ ճշմարիտին): Հոգեւորով՝ ինք հասկցած է կրօնականը, որ «մարդկային հոգու կեդրոնական երակ»ն է: Նիւթական կամ «սովորական իմաստ»ով հայրենիքը «որոշ չափով» կը նպաստէ հոգեւոր կամ «բարձր քաղաքակրթական զարգացման»: Քրիստոնէութիւնը, համաձայն իրեն, «յատկապէս այս խնդրում» բացառիկ դերը է բռնում. նա կամենում է աղ լինել կեանքի եւ քաղաքակրթութեան բոլոր երեւոյթները համեմելու համար»: Երբ իր մտքին հետեւինք՝ կը տեսնենք, որ քրիստոնէութեան կամեցածը՝ աւելի քան լոկ «համեմել» է, նաեւ է՝ մաքրել ու պահել ապականութենէ: Այսուհանդերձ՝ պիտի գործածեմ իր «համեմել» բայը, քանի որ նախասիրածը եղած է անիկա, կարծէք՝ իրեն համար «համեմել»ը ընդգրկէր նաեւ միւս պաշտօնները:

Հարց տուած է. «Ո՞րն է հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը»: Ու նախ պատասխանած. «Այս հարցի պատասխանը այն ժամանակ կարող ենք տալ, երբ աչքի առաջ ունենանք մեր ժողովրդի անցեալը: Որովհետեւ այնտեղ կարելի է որոշել միայն ժողովրդի հոգու բնորոշ գծերն ու յատկութիւնները, այնտեղ է պատկերանում ժողովրդի հոգեւոր կեանքի եւ ընդհանուր քաղաքակրթութեան մէջ ցոյց տուած զարգացումը»: Յետոյ՝ «...հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը Հայց. եկեղեցին է», գրած է, գայն ճանչնալով իբր բազմադարեան բովանդակիչը հայութեան հոգիին «բնորոշ» գիծերուն եւ յատկութիւններուն: Յովսէփեանց Վարդապետ այն «բնորոշ» գիծերուն եւ յատկութիւններուն նկարագրականը չէ ըրած, ինչպէս ըրած էր իր սիրելի ուսուցիչը՝ Օրմանեան Արքեպիսկոպոս, այն օրերուն՝ երբ Հայ Կաթողիկէ Եկեղեցիէն կ'անցնէր Հայց. Առաքելական Եկեղեցի: Իր համոզմամբ, անով սկսած է հայ ժողովուրդի «գիտակցական քաղաքակրթութիւն»ը: Եւ հայ մատենագրութեան առաջին յիշատակարան Ս. Գիրքին թարգմանութեան վրայ՝ դարեր ու դարեր սերունդներ կրթուած էին, գիտութիւն եւ արուեստ զարգացուած էր, մարդասիրական հաստատութիւններ կանգնած էին, ու ծառայութիւններ մատուցուած: Այսպիսին էր Հայ եկեղեցւոյ անցեալը: Սակայն միայն անցեալին վրայ հիանալը՝ բաւարար չէ: Կարելի չէ «հին կեանքով վերածնունդ»: Անշուշտ պէտք է գիտնալ, որ «հին»ին մէջ կան բարիքներ, որոնք իւրացուելու պարագային՝ «կենդանի ներգործութիւն» կրնան ունենալ: Յառաջդիմութիւնը «չլիթաների կապակցութիւն է. նոր օղակը պէտք է կապուի հին հետ, եւ այսպէս շարունակուի անընդհատ»: Ինչպէ՞ս: Մեր նախնեաց հոգիներուն մեզի գործակից ըլլալովը: Գրած է. «Հայոց հայրապետների եւ վարդապետների հատրնտիր շարքերը, հայրենիքի անձնուէր նահատակները պէտք է յարուցեն առնեն մեր հոգու մէջ եւ խրախոյս հանդիսանան վերածնութեան, մի պայծառ եւ վսեմ քաղաքակրթական կեանքի նորոգման»:

Հայ եկեղեցւոյ կամ հոգեւոր հայրենիքին քաղաքացիները կոչուած են ոչ թէ «անտարբեր հանդիսատես» ըլլալու իրենց սրբազան հաստատութեան քայքայումին, այլ «սիրոյ ու երախտագիտութեան անձնուէր զգացումով» իւր պէտք է բերեն անոր դարաւոր «մշտավառ կանթեղ»ին, որպէսզի անիկա «աւելի պայծառ լոյս տայ, եւ իւր հօտի ճշմարիտ, բարոյական վերածնութեան աղբիւրը դառնայ»: Իւր բերել, այսինքն՝ «նոր եւ ժամանակի պահանջների համեմատ» սեփական ներդրումը ունենալ...: Հոգեւոր հայրենիքին բոլոր հաւատաւորներուն ներդրումները կը յաղդին «պատուար» կանգնել «օտար, հօգր հոսանքների դէմ» ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար»: Գարեգին Վրդ. Յովսէփեանցի ազգային ինքնուրոյնութեան պահպանումը՝ ինքնաբանատարկումի գաղափարաբանութիւն մը չէ, այլ իբր աղ՝ կեանքի երեւոյթներուն համեմումի պահպանումը, այլ խօսքով՝ տեւաբար համեմումի, հայեացքը՝ դէպի նորը, Աստուծոյ հաճելին, ուստի՝ մարդասիրականը:

Բ. Գարեգին Վրդ. Յովսէփեանցի «Մեր Հոգեւոր Հայրենիքը» յօդուածէն եօթ տարիներ ետք է, որ Վահան Տէրեան գրած է իր «Հոգեւոր Հայաստան»ը, եւ Թիֆլիսի «Մշակ» պարբերականին 1914-ի Դեկտեմբերեան վերջին թիւերուն մէջ լոյս

ընծայած: Յօդուածը կը մեկնի Հայկական Հարցին շուրջ վերաբարձարձուող վիճաբանութիւններու ակնարկով մը: Հարցը այն ատեն կլանած էր հայութեան բոլոր խաւերուն ուշադրութիւնը: Գրած է. «Ամէն մի հայ ներկայ տազնապալի ու աղէտաւոր ժամին բնականաբար ջանում է թափանցել մշուշոտ ու անյայտ ապագայի խորքը իր հիւանդագին տարակուսանքների լուծումն որոնելով»: Հայութիւնը այնքան ոգեւորուած էր տեսակ մը «կրօնական գունաւորում ստացած» Հարցին դրական լուծման ցնորքով, որ եթէ անգամ «Հայաստան» կոչուած «լժբախտ երկրում» ունէ հայ չմնար՝ դարձեալ պիտի կիզուէր նոյն իղձերով: Ինք գայն հասկցած էր իբր «տարաբախտ» եւ «չարաբախտ» Հարց:

Ապա քննադատած է հայ մտաւորականութիւնը, թէ՛ «ազգային»ը եւ թէ՛ «բուրժուական»ը: «Ազգային»ը (հասկնալ՝ ազգայնականը, բայց ոչ ցեղապաշտական առումով, այլ իբր ազգին ազատագրութեամբ, ազգաշինութեան եւ հայրենաշինութեան մտահոգութեամբ տոգորուածը), որ «մի խոշոր» եւ «իշխող հոսանք» էր, մշակած էր տեսակէտ մը, ըստ որուն «թուրքահայ խնդրի լուծման հետ է կապուած հայութեան ամբողջ ապագայի հարցը», ներառեալ՝ մշակոյթի, որ ըստ իրենց՝ «վճռական դեր» ունէր հայութեան կեանքին մէջ, որովհետեւ հայութեան «գլխաւոր կուլտուրական կենտրոն»ն էին Էջրուածը, Վանը, Մուշը, մի խօսքով՝ Թուրքաց Հայաստանի կենտրոնները»: Տէրեան մերժած է այս տեսակէտը, գրելով. «Ինձ համար միանգամայն անընդունելի էր այդ կոնցեպցիան» ոչ միայն իբր մտածողութիւն, այլ՝ եւ իբր զգացողութիւն»: Իր մերժումը՝ անտարբերութիւն մը չէր հանդէպ «Թուրքաց Հայաստան»ի ազգակիցներուն ցաւին ու տանջանքին: Ինք եւս կ'ուզէր ճշալ՝ իր սիրելի ազգակիցներուն ցաւը զգալով. ինք եւս կ'ուզէր ազգակից՝ տեսնելով անոնց կրած տանջանքը: Սակայն կը խորհէր, թէ ճիշտ ու աղաղակ ապարդիւն էին: Ինք եւս շահագրգռուած էր անոնց ազատագրումով: Իսկ մշակոյթին առնչութեամբ՝ կը խորհէր համահայկական եզրով գայն ըմբռնել:

«Բուրժուական ինտելիգենցիա»-ի բռնած դիրքը տեսած էր իբր «աւելի տարօրինակ թիւրիմացութիւն»: Մինչ «ազգային» մտաւորականութիւնը իր գաղափարաբանութեամբ կ'ուզէր «հայութեան ճակատագիրը միանգամից լուծել, մի հարուածով կտրել այդ գորդեան հանգոյցը, մի հերոսական ճիգով վերջ դնել ծանր ու տարտաժ վիճակին»՝ «բուրժուական»ը յստակ չէր, թէ ի՞նչ կը կամենար: Անիկա ապագայիցացած էր: Անոր համար գոյութիւն չունէր հայ մշակոյթ? անտեղեակ էր հայ մշակոյթի գլխաւոր գործօններուն – լեզուին, գրականութեան, արուեստին. «այն ամէնին» ինչ մի ազգի կուլտուրան բնորոշող յատկանիշներն են կազմում»: Անոր ունեցածը չէնքերու հայրենասիրութիւն մըն էր, եւ հեռապատկերը՝ չէնքերու Հայաստան մը, առանց հոգիի:

Յետ քննադատութեանց, գրած է. «...մեր առաջ կայ դեռ մի խոշոր ու վսեմ աշխատանք, գուցէ ոչ այնքան շլացնող ու փայլուն իր արտաբերումով, սակայն իմաստալից ու վեհ իր ներքին բովանդակութեամբ»: Եւ այն աշխատանքը՝ հայութեան հաւաքումն էր եւ կազմակերպումը «գաղափարական իմաստով»: «Հոգեւոր Հայաստան»ը՝ այն գաղափարականօրէն ժողովեալներու եւ կազմակերպեալներու երկիրն է:

Համաձայն իրեն, ազգ մը կը ստեղծուի իր անդամներուն «ներքին մտաւոր-հոգեկան կապով»: Արտաքին հնարաւորութիւններէն զատ, անհրաժեշտ է «մի զօրութիւն, մի հոգեւոր մղում», որ մարդիկը կը համախմբէ: Արտաքին ազատութիւնն ու անկախութիւնը երբեք ազգ չեն ստեղծեր: Որպէսզի ժողովուրդ մը ազգ ըլլայ՝ պիտի ստեղծէ այն նոր արժէքները, որոնք իր ինքնութեան առհասարակ են: Հայութիւնը իր յոյսն ու ապագան պէտք է հիմնէ «նիւթական Հայաստան»ի վրայ, այլ՝ «հոգեւոր Հայաստան»ի: Հայաստանը պէտք է ճոխանայ «հոգու եւ մտքի հպարտութեամբ», իմանալ՝ հոգիի եւ մտքի հպարտութիւն առթող իրագործումներով:

Դիւրին չէ «հոգեւոր Հայաստան»ի կառուցումը, անիկա ծանր ու տեսական աշխատանք կը պահանջէ, «անթիւ կեանքերի տոկուն հաւատ եւ գիտակցութիւն»: Անիկա թէեւ անարիւն կառուցում է, «բայց ազնիւ, գուցէ աւելի դժուար, աւելի ահաւոր զոհաբերում» քան արիւնի զոհաբերումը: Իր հերոսները՝ «հոգու ասպետներ»ն են, անուսով յիշած է Բաբելոնի, Գրիգոր Արծրունիին, Միքայէլ Նալբանդեանը եւ՝ Պետրոս Դուրեանը:

Ինք վկայ մըն էր «աւերակների երկիր» Հայաստանին, նաեւ վկայ մը՝ աւերուած կիսամեռ «հոգեւոր Հայաստան»ին: Ի՞նչ պէտք էր ընել: Իր կոչն էր, որ իւրաքանչիւր հայ քննէ իր սիրտը եւ նայի, թէ «կա՞յ արդեօք այնտեղ հաւատ», որով կարելի պիտի ըլլար կենդանացնել «հոգեւոր Հայաստան»ը: Եթէ չկար, ապա՝ գուր էին բոլոր ջանքերը: Անիկա միայն կը կենդանանայ, երբ «մի նոր ու առաւել բարձր տեսչանքով, մի պարզ ու խորին գիտակցութեամբ, մի անասան բաղձանքով» կը յաղթահարէ արտաքին արգելքներն ու խոչընդոտները, եւ կամքով, հաւատքով ու անխախտ գիտակցութեամբ կը ստեղծէ իր նոր արժէքները:

Երբ «հոգեւոր Հայաստան»ը կամ գաղափարական Հայաստանը կենդանի ըլլայ՝ կենդանի կ'ըլլայ նաեւ նիւթական Հայաստանը:

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ. (Ծարուակելի 1)



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝  
**(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼՍԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

**\*Նոր Հասցէ՝**  
Voyages Haig Travel  
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

**PERMIS DE QUÉBEC**

Tel: + 1 514-284-7676  
Email info@haigtravel.ca

### Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտանոցի տարեկան համերգը



ԹՈՐՈՆԹՕ.- Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, 20 մայիս 2026-ին, Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտանոցի տարեկան համերգը: Տիկին Անահիտ Կուստուզեանի աշակերտները, 31 տարուան ընթացքին, ունեցած են զանազան համերգներ՝ օգնելու Հայաստանի որբանոցներուն, հոգալու երեխաներու անմիջական եւ անհրաժեշտ կարիքները, ինչպէս նաեւ ի նպաստ Հայաստանի Նիկողայոս Տիգրանեանի անուան դպրոցի տեսողութենէ զուրկ տաղանդաւոր աշակերտներու բժշկական օգնութեան եւ Պրէյլի այբուբենով յատուկ գիրքերու ու այլ անհրաժեշտ պարագաներու ապահովման:

Աշակերտները համերգներ ունեցած են նաեւ Թորոնթոյի հայ տարեցներու համար յատկացուած յատուկ բնակավայրերու մէջ՝ ուրախութիւն պարգեւելով անոնց: «Դրօշ Եռագոյն» տեսահոլովակը, կազմակերպուած տիկին Անահիտ Կուստուզեանի կողմէ եւ մասնակցութեամբ իրեն, իր աշակերտներուն, Թորոնթոյի հայ երիտասարդ երգիչներուն, հանրաժանօթ «Սասուն» պարախումբին, ինչպէս նաեւ Թորոնթոյէն եւ Լոս Անճելոսէն երաժիշտներու, իւրայատուկ բարեգործական ծրագիր մըն էր՝ նուիրուած 2020 թուականի պատերազմին ծանրօրէն վիրաւորուած հայ հերոսներուն: Ծրագիրին նպատակն էր ապահովել անոնց բժշկական օգնութիւնը, որ տակաւին ընթացքի մէջ է մինչեւ այսօր, եւ անգամ մը եւս յիշեցնել մարդոց՝ գնահատելու կեանքի արժէքները:

Համերգը սկսաւ ներկաներու ուրախ տրամադրութեան մէջ: Երգով եւ նուագներով յաջորդաբար բեմ բարձրացան հետեւեալ աշակերտները՝ Ալիանա Աթթա, Արփի եւ Լիլիթ Աբրահամեաններ, Թովմաս եւ Միլա Օլիվիէրա, Անճել Յարթունեան, Վիքթորիա Կոլենթի, Թէա Ճեմալով, Մարիամ եւ Դաւիթ Պոյաճեան, Արջուն Ջինտալ եւ Քաթրին Մատոյեան: Քանոնի նուագակցութեամբ ելոյթ ունեցաւ Աստղիկ Ալթունեան:

Անահիտ Կուստուզեանի կատարմամբ հնչեցին Վահան Տէրեանի խօսքերով եւ Վաչէ Յովսէփեանի երաժշտութեամբ «Էստոնական» («Երբ կը յոգնես, կը դադարես աշխարհից») ստեղծագործութիւնը, ինչպէս նաեւ անգլերէն «Թումպալայակա» երգը:

Անահիտ Կուստուզեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ Առիւծ Կուստուզեանին՝ իր օգնութեան համար, որ կարելի դարձուց այս գեղեցիկ համերգին իրականացումը, ինչպէս նաեւ «Անահիտ» երաժշտանոցի աշակերտներուն ամէնամեայ ելոյթին նկարահանումը: Բոլոր կատարումները հաճելի եւ սրտայոյզ էին: Համերգը աւարտեցաւ բոլոր ծափահարութիւններով:

### Գանատա եւ Թուրքիա կը քննարկեն երկկողմ յարաբերութիւններու խորացման հեռանկարները

ՕԹԹԱՈՒԱ.- Գանատայի արտաքին գործոց նախարար Անիթա Անանտ յունիս 25 եւ 26-ին ընդունեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Հաքան Ֆիտանը՝ Օթթաուայի եւ Անգարայի միջեւ յարաբերութիւնները խորացնելու եւ ՆԱԹՕ-ի դադարեցումը վերջ տալու համագործակցութիւնը ընդլայնելու նպատակով:

Քննարկումներու օրակարգին վրայ էին տարածաշրջանային անվտանգութիւնը, ուժանիւթը, պաշտպանութիւնը, օդատիեզերական եւ հանքարդիւնաբերական ոլորտները, իսկ երկու նախարարները այցելեցին նաեւ Օնթարիոյի Darlington հիւլէակայան:

Այցը, սակայն, մտահոգութիւն յառաջացուցած է գանատահայութեան մօտ՝ նկատի ունենալով Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութեան ժխտումը, Ատրպէյճանին ցուցաբերած աջակցութիւնը եւ 2020-ի Արցախեան պատերազմի ընթացքին գանատական ռազմական արհեստագիտութեան Ատրպէյճան փոխանցման պատճառով առաջացած վստահութեան ճգնաժամը, որուն հետեւանքով Օթթաուա ժամանակին դադարեցուցած էր ռազմական արտահանման արտօնագիրները Թուրքիոյ նկատմամբ: Ժամանակին դադարեցուցած էր ռազմական արտահանման արտօնագիրները Թուրքիոյ նկատմամբ:

#### Սահմ. ... Սկիզբը կարող է 1


Որոշումի հրապարակումէն ետք արդարադատութեան նախարար Սրբուհի Գալեան լրագրողներուն ըսաւ, որ «արդարադատութիւնը յաղթեց»: ԲՀԿ-ի ներկայացուցիչ Արամ Օրբելեան, իր կարգին, նշեց, որ Սահմանադրական դատարանը պատմական հնարաւորութիւն ունէր չեղեալ յայտարարելու ընտրութիւններու արդիւնքները: Ան ըսաւ, որ ներկայացուած ապացոյցները բաւարար էին առնուազն ԲՀԿ-ին պատգամաւորական լիազօրութիւնները ապահովելու համար:

ԲՀԿ-ի վիճարկումին առանցքը այն էր, որ ԿԸՅ-ն երկու ընտրատեղամասերու արդիւնքները անվաւեր ճանչնալէ ետք կուսակցութիւնը ձայներ կորսնցուցած էր եւ չէր կրցած յաղթահարել ընտրական շեմը: ԿԸՅ-ի նախագահ Վահագն Յովակիմեան, սակայն, դատարանին մէջ պնդած էր, որ արձանագրուած խախտումները չեն ազդած ընտրութիւններու ընդհանուր արդիւնքին վրայ:

Գործի քննութեան մասնակցեցան Սահմանադրական դատարանի 9 դատաւորներէն 7-ը: Դատաւորներ Վլադիմիր Վարդանեան եւ Արտակ Զէյնալեան չմասնակցեցան քննութեան՝ կողմերուն նկատմամբ կանխակալ վերաբերում ունենալու հիմքով: Դատաւարութեան մէջ մասը տեղի ունեցաւ փակ ուժով, քանի որ քննութեան առարկայ դարձած էին գաղտնի փաստաթուղթեր: Անոնց մէջ կային քարոզարշաւի ընթացքին ընդգրկման գրառումներու դէմ յարուցուած քրէական վարոյթներուն, ինչպէս նաեւ ընտրողներու ցուցակներուն վերաբերող նիւթեր:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը, որ դատարանին մէջ ներգրաւուած էր որպէս երրորդ կողմ, պաշտպանեց ԿԸՅ-ի դիրքորոշումը:

### Համա-ՀՄԸՄ-ական ձեռնարկներու աշխոյժ եռուզեռով ամիսներ



ՀՄԸՄ-ի համահայկական ընտանիքը աշխոյժ եռուզեռի մէջ է: Միջին Արեւելքէն Եւրոպա, Հայաստան, Ամերիկաներ եւ Աւստրալիա, միութեան աշխարհասփիւռ շրջաններն ու մասնաճիւղերը կը պատրաստուին իրենց մասնակցութիւնը բերելու ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան սկսուտական, քարոզչական, կազմակերպչական եւ ընկերային բնոյթի հինգ մեծ ձեռնարկներուն:

Ձեռնարկներուն շարքը կը սկսի 13 յուլիսին, Գերմանիայէն, ուրկէ ընթացք կ'առնէ ՀՄԸՄ-ի առաջին նաւապետը՝ Դանուբ գետին վրայ: Եօթնօրեայ նաւապետը կը համախմբէ ՀՄԸՄ-ի բարեկամներ եւ բարերարներ, որոնք ընկերային հաճելի միջոցառում մէջ, նաեւ կ'այցելեն եւրոպական չորս երկիրներու (Գերմանիա, Աւստրիա, Սլովակիա, Հունգարիա) եօթը քաղաքներ:

Յաջորդ ձեռնարկը, դարձեալ առաջին անգամ ըլլալով, 20-22 յուլիսին, Երեւանի մէջ կը համախմբէ միութեան համահայկական կառույցի քարոզչական պատասխանատուները, որոնք եւրոպայ համագումարի մը ընթացքին կը քննեն արդի երիտասարդութեան հետ խօսակից դառնալու ժամանակակից միջոցները, եւ ՀՄԸՄ-ը հայութեան աւելի լայն շերտերուն հասանելի դարձնելու կարելիութիւնները: Համագումարին մասնակիցները կ'այցելեն քարոզչական մարզի մասնագիտական կեդրոններ:

Սկսուտական աշխատանքները, իրենց կարգին, կարեւոր տեղ կը գրաւեն ՀՄԸՄ-ի համահայկական ձեռնարկներուն մէջ: 21-23 յուլիսին, Աղվեւրանի մէջ, Հայաստան, տեղի կ'ունենայ միութեան «Արարատեան» կարգի մասնակիցներուն սեմինարը, մասնակցութեամբ 63 բարձրաստիճան քոյր-եղբայրներու, որոնք մէկուկէս տարուան տեսական եւ գործնական իրենց դասընթացքները աւարտելէ ետք՝ սեմինարին կը ներկայացնեն իրենց ուսումնասիրական աշխատանքները եւ համա-ՀՄԸՄ-ական բանակումի բացման հանդիսութեան կը ստանան սկսուտական միութեանական իրենց բարձրագոյն կարգը:

«Արարատեան» կարգի սեմինարին կը յաջորդէ Բիւրականի մէջ կատարուելիք համա-ՀՄԸՄ-ական 13-րդ ընդհանուր բանակումը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն միութեան 28 շրջաններէն աւելի քան 900 սկսուտներ: Բանակումին կը մասնակցին նաեւ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւնը (ՀՄԱԿ), «Սիփան», «Նայիրի» եւ Սպահանի «Արարատ» միութիւնները:

«Արարատի համար՝ կանգուն» նշանաբանով բանակումը կ'երկարի 24 յուլիսէն 2 օգոստոս 2026 եւ, ինչպէս միշտ, կը յատկանշուի իր բազմամշակութային օրով, դէպի Արագածի գագաթ արշաւով, Երեւանի հրապարակային տողանցքով եւ Լիզպոնի հերոսական գործողութեան ոգեկոչումով:

Սեպտեմբերի վերջաւորութեան աշխատանքի դաշտը կը փոխադրուի Սիտնի, Աւստրալիա, ուր տեղի կ'ունենան շրջանի բարձրաստիճան խմբապետներու սկսուտական «Վկայեալ» կարգի դասընթացքները, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան աջակցութեամբ եւ Եւրոպայէն յատուկ խմբապետներու գործողութեամբ: Խմբապետներուն կ'ընկերանայ Կեդրոնական Վարչութեան անդամ մը: Այնուհետեւ, 2026-ի տարուան համա-ՀՄԸՄ-ական ձեռնարկներուն եզրափակումը կը կատարուի 5-6 Նոյեմբերին, երբ միութեան համահայկական ընտանիքը Երեւանի մէջ կը կատարէ միջ-գիւղական իր 12-րդ խորհրդաժողովը, որուն կը նախորդեն ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան 2023-2027 քառամեակի չորրորդ լիազումարի նիստերը:

#### ՀՄԸՄ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

#### Վարժ. ... Սկիզբը կարող է 1

մասնաճիւղի վարչութեան անդամ է, ինչպէս նաեւ ՀՄԸՄ-Կազմ մասնաճիւղի սկսուտական խմբապետ: Ան նաեւ մաս կազմած է Համագայինի «Պետրոս Աղամեան» թատերախումբին:

Սահակ Մուտարիկեան իր երկրորդական ուսումը ստացած է Լիբանանի Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգ. գոյէճէն, իսկ ներկայիս կը յաճախէ «Saint-Laurent centre éducatif» գոյէճը: Մաս կը կազմէ ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան եւ Պատանեկան Միութեան՝ որպէս վարիչ: Անդամակցած է ՀՄԸՄ-ի սկսուտական կազմին եւ ոտնազնդակի խումբերուն՝ Լիբանան եւ Մոնթրէալ:

Ծրագրի գործակատարները «Հորիզոն»ի ամէնօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս պիտի կատարեն թարգմանութիւններ, գաղութային ձեռնարկներու թղթակցութիւններ, հարցախոյզներ, լրատուական եւ խմբագրական աշխատանք, ինչպէս նաեւ արխիւներու թուայնագրում:

Նշենք, որ 2016-ին, 2017-ին, 2018-ին, եւ 2019-ին Գանատայի Ժառանգութեան նախարարութեան կողմէ հովանաւորուած «Հորիզոն»ի վարժողական ծրագրի գործակատարները եղած են Ս. Յակոբ Ազգային վարժարանի շրջանաւարտներ Արին Տիմիթեանը, Կորիւն Գոյունեանը, Վազգէն Գարագաշեանը եւ Յովիկ Կէտիկեանը, որոնք 6 շաբաթեան վրայ երկարող ծրագրի ընթացքին աշխատեցան «Հորիզոն»ի խմբագրական եւ վարչական բաժանմունքներուն մէջ եւ կարեւոր ներդրում ունեցան արխիւագրելու «Հորիզոն»ի 40 տարիներու թիւերը:

# Սփիւոքի լիճելութիւնը «վերադարձ»էն առաջ եւ յետոյ

Լոս Անճելըսի մէջ, 14-15 Մարտին տեղի ունեցած «Սփիւոք» Խորհրդաժողովի անդրադարձին արձագանգելով, Բաֆֆի Արտալճեան իր «Վերադարձի Վերիմաստաւորումը. Մտորումներ՝ 2026ի Լոս Անճելըսի «Սփիւոք» Խորհրդաժողովէն» յօդուածով («Ասպարէզ», 30 Ապրիլ 2026) լուսարձակի տակ կ'առնէ Սփիւոքը նկարագրող երկու յղացքներ՝ «Հայրենագրկուածներ» եւ «Հայրենալքողներ», զորս կը քաղէ Խաժակ Մկրտիչեանի եւ Յակոբ Պալեանի համապատասխան յօդուածներէն: Առանց անպայմանօրէն հակադրուելու այդ յղացքները հիմնաւորող փաստարկներուն, Բաֆֆին ճիշդ կերպով դիտել կու տայ, որ անոնք բաւարար չեն «արտայայտելու համար մեր իրականութեան ամբողջ բարդութիւնը»: Ասոր հիմնական պատճառը, կը բացատրէ, այն է, որ նման բնորոշում «կրնայ կաղապարել մեր քաղաքական միտքը՝ փոխանակ զայն մղելու դէպի նոր ու աւելի ընդգրկուն հորիզոններ»:

Այս պակասը լրացնելու համար ան կը դիմէ «վերադարձ»ի գաղափարի «վերիմաստաւորման» որպէս «սերնդային բարդ փորձառութիւն»: Ընդ որում, եւ ներկայացնելէ ետք մինչեւ Հայաստանի անկախացում այդ հասկացողութեան ընկալման եւ սփիւոքեան քաղաքական օրակարգի վրայ ընդգրկման հանգրուանները, ուշադրութեան կեդրոնին կը բերէ «21-րդ դարու հայկական անդրազգային տարածքին ընդլայնումը. ազգ մը, որ կը գործէ հայկական պետութեան մէջ եւ օրըստօրէ աւելի՛ անոր սահմաններէն դուրս»: Հետեւաբար, կը նախաձեռնէ «վերադարձ»ի վերասահմանումին՝ «21-րդ դարու հայկական քաղաքական մտքին համար» զայն դիտարկելով «ազգային նոր գիտակցութեան փուլ»ի մը ենթադրումին մէջ, որ ենթակայականօրէն կ'իմաստաւորէ «չարունակաբար ներգրաւուած մնալ հայկական ազգային կեանքին մէջ» բանաձեւումով: Բաֆֆին կը մէջբերէ «վերադարձ»ի բազմաթիւ ձեւեր՝ քաղաքացիութեան ձեռքբերումէն մինչեւ կապերու պահպանում, ներդրումներ, քաղաքական մասնակցութիւն, առցանց ներկայութիւն, Հայրենաբնակ թէ՛ Սփիւոք բնակող հայութիւնը համարելով մէկ ամբողջութիւն, Բաֆֆին կ'եզրակացնէ. «Ի վերջոյ, վերադարձը պէտք է դադարի ըլլալէ անցեալի առասպել մը եւ դառնայ նախ եւ առաջ վերադարձ դէպի գիտակից ազգային ու ցանցային մասնակցութիւն», ամէնէն աւելի կարեւորելով «ապագայի հանդէպ մեր հաւաքական քաղաքացիական յանձնառութիւնը»:

Եւ քանի որ յօդուածի աւարտին ան հարց կու տայ, թէ «վերադարձ»ի վերիմաստաւորման իր փորձը ի՛նչ արձագանգ պիտի գտնէ, կամ աւելի ուղղակի՝ «Ես վերադարձած եմ. իսկ դո՞ւք», կը հարցնէ, պիտի փորձեմ արձագանգել՝ «վերադարձ»ի ընկալումը քննադատաբար տեղադրելով Սփիւոքեան գոյավիճակի լինելութեան մարտահրաւէրին մէջ:

Բաֆֆիին մեկնակէտը երկու յօդուածներ են, ուր յստակ է, թէ «վերադարձ»ը ինչ կը նշանակէ: Սփիւոքը ընկալել որպէս «հայրենահանուած» կամ «հայրենալքած» հաւաքականութիւն, կը նշանակէ, որ Սփիւոքին «ճակատագրուած» է վերադառնալ հայրենիք: Կամ՝ սփիւոքեան ինքնութիւնը չի՛ կրնար ընկալուել որպէս ինքնուրոյն, այսինքն՝ ոչ անպայմանօրէն առնչուող ինչ-որ վերադարձի գաղափարի՝ «ոչ այլ» ըլլալ այդ խորհրդանշական, թէ որպէս հաւատոյ հանգանակ: Այս խօսույթը յատկանշական է, եթէ ոչ կեդրոնական, նախաանկախութիւն սփիւոքեան յարացոյցի մը, որ Սփիւոքը կը բնութագրէր որպէս անցողակի հանգրուան, որպէս ազգային հաւաքականութեան աշխարհագրական ոչ-բնական իրավիճակ՝ դատապարտուած ուժացման, եթէ ինչ-որ ապագայի հայրենիք վերադարձի կարելիութիւնը չքացուի: Այն ժամանակ, Յեղասպանութեան եւ Հայաստանի խորհրդայնացումով անկախ հայրենիքէ դուրս հայութեան հատուածին համար, համարեայ ամբողջ երեք սերունդ, սխալ չէր այդ մօտեցումը, այնքան ատեն, որ ինքնութեանական քաղաքականացման գորաշարժին կը նպաստէր: Սակայն սփիւոքեան ինքնուրոյնութիւնը կամ «ինքնացումը»՝ հետեւելով Յարութիւն Քիւրքճեանի յղացքին, առանց հայրենակապակցութեան ժխտումին, իր տեղը գտած էր Սփիւոքի մասին մտածողներու, ստեղծագործողներու եւ 1970-ականներուն ծնունդ առած սփիւոքագիտական մարդին մէջ իրենք գիրենք հաստատած ակադեմիականներու մօտ 1970-80 բախտորոշ տասնամեակներուն: Կը մնայ, որ Սփիւոքի քաղաքական մտածողութիւնը, որ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման պահանջատիրական պայքարով յեղափոխական շրջադարձ յառա-

ջացուցած էր սփիւոքեան երրորդ սերունդին մօտ, անկախութեանէն ետք, բայց մասնաւորաբար 21րդ դարու սկիզբէն ի վեր, երբ արդէն ե՛ւ միջազգային, ե՛ւ հայկական իրականութեան փոխուած պայմանները յստակացած էին, չկարողացաւ Սփիւոքի ինքնուրոյնութիւնը վերածել քաղաքական օրակարգի առանց զայն պայմանաւորելու եւ պարտաւորելու հայաստանեան զարգացումներու տրամաբանութեամբ՝ Հայաստան-Սփիւոք առաջնահերթային, եթէ ոչ մենաշնորհային ուղղութեամբ: Արդիւնքով, Սփիւոքը որպէս «հայրենագրկուած» հաւաքականութիւն կամ «հայրենալքողներ» նկարագրող հանրային խօսույթը շարունակուեցաւ, ի շարս «Սփիւոքը ինքնանպատակ չէ՞»ի նման մանթրաներու: Անհրաժեշտ ուշադրութեան չարժանացան, օրինակի համար, «Հայկական Սփիւոքի Հարցախոյզ»ի նման ուսումնասիրութիւններու արդիւնքները, որոնք, ի մէջ այլոց, կը բացայայտէին իր մեծամասնութեամբ սփիւոքեան զուգորդուած ինքնութիւն մը, ուր հայկականութիւնը կը գոյակցի, առաջնահերթաբար կամ ոչ, այլ, ծնած կամ ապրած երկրի մը ինքնութեան հետ: Այլ խօսքով, մինչ «հայրենագրկուած» ու «հայրենալքող» սփիւոքեան նկարագրումները կը շարունակեն յատկանշել համասփիւոքեան ցանց եւ գորաշարժի կարողականութիւն ունեցող գլխաւոր կազմակերպութիւններու պաշտօնական խօսույթը՝ իմբազրական ըլլալ այդ, հանրային ելոյթ թէ՛ հարցազրոյց, սփիւոքեան լինելութիւնը, կամ Վահէ Օշականին բանաստեղծած/ձեւած «սփիւքահայ ըլլալ»ը, կը բնութագրուի որպէս այդ երկու նկարագրութիւնները գերազանցած գոյավիճակ, որպէս իր տարբերումով ինքնուրոյն ինքնութիւն:

Ինչպէս այս յօդուածի երկրորդ պարբերութեան մէջ ամփոփ նկարագրած եմ, Բաֆֆին փորձած է գերազանցել «վերադարձ»ի իմաստաւորման աւանդական սահմանափակումը եւ վերիմաստաւորել զայն որպէս «ուղի», ուր հիմնականը «չարունակաբար ներգրաւուած մնալ (է) հայկական ազգային կեանքին մէջ»: Անկէ անդին, բազմաթիւ օրինակներ կու տայ այդ շարունակական ներգրաւման՝ իրաւական, ընկերային ու ընտանեկան, գործնական, քաղաքական մասնակցութիւն, առցանց ներկայութիւն...

Ողջունելի է Բաֆֆիին այս յօդուածին պատգամը՝ «հայրենագրկուած»ի եւ «հայրենալքող»ի ենթադրած «վերադարձ»ի միակողմանի՝ Սփիւոքէն հայրենիք, ընկալումը վերիմաստաւորելու հայրենիքի եւ Սփիւոքի ամբողջութեամբ յատկանշուող 21րդ դարու հայկական իրականութեան ոլորտին մէջ: Այդ տրամաբանութիւնը կը գերազանցէ հայութեան որեւէ հատուածը առաջնահերթային նկատելի եւ ազգային յանձնառութիւնը կը տեղադրէ բազմաձեւ «վերադարձ»ը մնայուն «հոսք»ի վերածելու նախանձախնդրութեան մէջ: Այս տրամաբանութիւնը անխուսափելի է, երբ, ինչպէս Բաֆֆին դիտել կու տայ իր յօդուածին մէջ, «21-րդ դարու մարդկութեան պատմութիւնը, ի վերջոյ, գաղթի եւ տեղաշարժի պատմութիւնն է»:


Այդուհանդերձ, երկու յստակացում անհրաժեշտ է գերազանցելու համար Սփիւոքը նկարագրող / սահման(ափակ)ող այդ երկու յղացքները:

Առաջին, յօդուածին մէջ Բաֆֆին կը գործածէ «հայկական անդրազգային տարածք» հասկացողութիւն մը, որ կը մէկտեղէ ե՛ւ հայկական պետութեան սահմաններուն մէջ, ե՛ւ Սփիւոքի տարածքին բնակող հայութիւնը, ինչ որ համահունչ է «համահայկականութիւն» կամ «հայաշխարհ» հասկացողութեան: Ոչ շատ հեռաւոր անցեալին, այդ մէկը յստակ կը նկարագրուէր որպէս «Հայաստան-Սփիւոք-Արցախ եռամիասնութիւն», որ եթէ մէկ կողմէն կը փորձէր հաւաքական ամբողջականութեան այդ նկարագրումներուն վերացականութիւնը մեղմացնել յստակ ամբողջութիւններու յղելով, միւս կողմէ սակայն չէր յաջողել լաւագոյն պարագային ծրագրի մը բաղձանքէն անդին անցնել, որովհետեւ, փաստօրէն, կը վերաբերէր գերիշխան պետութեան մը, միջազգային, ոչ իսկ Հայաստանի կողմէ ճանաչում չունեցող պետութեան մը եւ իր ընդհանրութեան մէջ ընկալուող ոչ-պետական հաւաքականութեան երեւոյթի մը: Այդ եռամիասնութիւնը երբեք չուներ ցարաբերման եւ կառավարման ինչ-որ հայեցակարգ: «Անդրազգային» յղացքը, սակայն, կը սահմանուի որպէս երեւոյթներ, գործընթացներ, յարաբերութիւններ կամ ինքնութիւններ, որոնք կը գերազանցեն մէկ պետութեան կամ ազգային սահմաններու շրջանակը եւ կը գործեն բազմաթիւ երկիրներու կամ հասարակութիւններու միջեւ: Այս

